«ՄԿ Բիլդինգ» ՍՊԸ և «Կապանի Նորոգշին» ՍՊԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի վարչական տարածքում 200 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 80 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21.06.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի հունիսի 18-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «ՄԿ Բիլդինգ» ՍՊԸ և «Կապանի Նորոգշին» ՍՊԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի վարչական տարածքում 200 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 80 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի բնապահպան Արմինե Գաբրիելյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի վերահսկող ինժեներ՝ Նորայր Կարապետյանը «ՄԿ Բիլդինգ» ՍՊԸ աշխատակիցներ, «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ աշխատակիցներ, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի **2024 թվականի մայիսի 15-ի թիվ 084 (7085) համարում**, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ ներկայացուցիչ Էրիկ Թումանյանին:

Զեկույց (Էրիկ Թումանյան) – Շնորհակալություն պարոն Թադևոսյան: Նախ ողջունում եմ բոլորին: Այսօր մենք հավաքվել ենք այստեղ քննարկելու Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրում շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկման առաջին հանրային լսումը: Ըստ Օրենքի 12-րդ հոդվածի սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների: Քանի որ մեր տարածքը գերազանցում է 1500մ^2 մակերեսը, ուրեմն այդ գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի:

Հանրային քննարկման մասին համայնքը պատշաճ կերպով ծանուցվել է նախաձեռնողի կողմից և 5 օրյա ժամկետում հայտարարությունը տեղադրվել է "Առավոտ" օրաթերթում:

Ծրագիրն իրականացվում է թվով 300 դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ՀՀ կառավարության ծրագրի շրջանակներում:

Նախատեսվում է կառուցել 200 տեղանոց դպրոց և 80 տեղանոց սաների համար կրթահամալիր տիպային նախագծի հիման վրա՝ տեղակապման միջոցով:

Շենքը բաղկացած է լինելու երկհարկանի դպրոցից, ինչպես նաև երկհարկանի մանկապարտեզից: Մասնաշենքերն իրար հետ միացված են լինելու դեֆորմացիոն կարերով: Մանկապարտեզի համար նախատեսված է ամբարձիչ: Դպրոցում լինելու է վերելակ: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսվելու են թեքահարթակներ:

Առաջին հարկում նախատեսվում են դասասենյակներ, պարետի և վարչական սենյակներ, բուֆետ: Առաջին հարկում է լինելու նաև հանդիսությունների սրահը: Երկրորդ հարկում լինելու են դասասենյակներ՝ ինֆորմատիկայի սենյակ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ, ուսուցչանոց և այլն: Դպրոցը նախատեսված է լինելու 1-12 դասարան սովորող աշակերտների համար:

Մանկապարտեզի շենքը նախատեսվում է 4 խմբերի համար՝ յուրաքանչյուրը 20 հոգանոց:

Նկուղային հարկը նախատեսված 21.6x20.4մ երկարությամբ և լայնությամբ, որն անհրաժեշտության դեպքում կարող ենք օգտագործել նաև թաքստոց:

Երկու հարկերն իրար հետ կապված են լինելու աստիճաններով և միջհարկային ամբարձիչ է լինելու՝ հաշմանդամների համար:

Նկուղային հարկում է լինելու գրադարանը, բուժկետը, սանհանգույցներ են լինելու և ջրի ռեզերվուար:

Դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգվելու է, առկա են լինելու 100մ երկարությամբ վազքուղի, բացօթյա ցանկապատված մարզադաշտ է լինելու 30մ երկարությամբ ու 18մ լայնությամբ: Լինելու է ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք: Նախատեսվում է *նաև դպրոցի ցանկապատում: Առկա են քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ: Քիմիայի* լաբորատորիայում լինելու է քարշիչ պահարան, ինչպես նաև լաբորատորիաներում նախատեսվելու են ջրի ծորակներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են միայն շինարարական աշխատանքների հետ, և հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ եւ կարճատեւ, կկիրառվեն մեղմացնող միջոցառումներ, օդի աղտոտման համար պարբերաբար տարածքը կջրցանվի: Շինարարության ընթացքում հնարավոր է աղմուկ և թրթռումներ: Հարակից տների եւ շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի եւ թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, բուսականությունը և ծառերը կպաշտպանվեն, հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 1404-ն որոշմամբ սահմանված պահանջների համաձայն:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաստատված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Շինարարարության տևողությունը կկազմի 650 օր:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Վե՞րջ:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Առաջին հանրային լսման համար ներկայացրեցինք այն ինչ պետք է նախատեսվի: Եթե հարցեր և առաջարկություններ կան կխնդրեմ բարձրաձայնել:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Դուք նախագծողն եք չէ՞:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Այո:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Մանկապարտեզում նախատեսված է 4 խումբ 20 երեխայի համար: Դուք տեղյակ եք ի՞նչ տարիքի երեխաների համար է: Եթե ես չեմ սխալվում նախակրթարան են հաճախում սկսած 3 տարեկանից, չէ՞ պարոն Մարտիրոսյան:

Պատասխան (Արմեն Մարտիրոսյան) – Այո:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Այս դեպքում բացի կրտսեր առաջին խմբերը, որոնք 20 երեխա կարող են ընդունել, միջին և ավագ խմբերը՝ նախակրթարանի տարիքի երեխաների խմբերը մինչև 30 են լինում: Ինչո՞ւ չենք մենք այդ հնարավորությունը ստեղծում:

Պատասխան (Նորայր Կարապետյան) – Տեղեր կան, որ մանկապարտեզները տիպային են նախատեսված դրա համար կառավարության որոշմամբ հիմնականում տիպային դպրոցներ են տեղադրում և նրանց մեջ չափերը այդքան են լինում: Դրա համար ըստ չափորոշիչների 20 տեղանոց են լինում:

Հարց (Արմեն Մարտիրոսյան) – Ենթակա՞ չեն փոփոխության:

Պատասխան (Նորայր Կարապետյան) – Ոչ: Իրենք, որ սեյսմիկ կարով են առանձնանում, ուրիշ տարբերակ չունեն: Դրա համար հիմնականում այդ տիպային դպրոցների մեջ նախատեսված է այդքան քանակով տեղերի բաշխումը:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Նշեցիք, որ գրադարանը, բուժկետը նկուղային հարկում են լինելու: Կարծում եմ հաշվի է առնված չէ՞ օդափոխությունը:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Միանշանակ բոլորը հաշվի է առնվելու:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Նաև օգտագործվելու է որպե՞ս թաքստոց:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Հարկ եղած դեպքում նաև թաքստոց:

Հարց (Լուսինե Հարությունյան) – Ապաստարանի առկայություն դուք նշեցիք չէ՞, որ լինելու է: Կարծում եմ շատ կարևոր և անհրաժեշտ պահանջ է:

Պատասխան (Նորայր Կարապետյան) – Օրենքը թույլ չի տալիս ասենք ապաստարան դրա համար ասում ենք նկուղային հարկ, որը օգտագործվում է որպես թաքստոց:

Պատասխան (Լուսինե Հարությունյան) – Շնորհակալություն:

Լրացում (Նորայր Կարապետյան) – Լրիվ համապատասխան չափորոշիչներով դպրոց է ստացվելու: Սյունիքի մարզում պարտադիր պայման է:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Մարզադաշտ ասեցիք, ի՞նչ ծածկ է ունենալու:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Ծածկը դեռ չենք որոշել, ինձ թվում է արհեստական խոտածածկ է: Տիպային նախագծում պետք է որ արհեստական ծածկ լինի:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Նախ պետք է հասկանանք ինչ նպատակով է օգտագործվելու: Միգուցե բազմաֆունկցիոնալ բոլոր սպորտերի համար նախատեսված լինի, և ասենք, օրինակ այն ծածկերի, որ և՛ բասկետբոլի, և՛ վոլեյբոլի, և՛ ֆուտբոլի, և՛ ֆիզկուլտուրայի դասեր անցկացնելու համար:

Պատասխան (Նորայր Կարապետյան) – Նախագծողը վերջնական նախագիծը արդեն բարեկարգումը 0-ից ներքևնա նախագծողն անում և բարեկարգման հատվածը: Վերջացնելուց հետո բերելու ենք Ձեր հետ քննարկման, հաստատման: Հաստատման արդյունքում արդեն կքննարկենք նախատեսվող ծածկը: Ոնց կցանկանա համայնքը, այդպես էլ կկառուցենք, որ բազմաֆունկցիոնալ օգտագործվի կամ մարզադաշտի համար: Արդեն դուք կորոշեք:

Լրացում (Արմեն Մարտիրոսյան) – Այսինքն համայնքի ղեկավարի հաստատելուց հետո արդեն շինթույլտվություն են տալու:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Մարզադաշտից բացի լինելու է նաև մարզադահլիճ՝ շենքի ներսում: Մարզադաշտը բացօթյա մարզադաշտն է:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Ես ուղղակի ի նկատի ունեմ, որ պետք է հաշվի առնվեն ֆիզկուլտուրայի դասերի անցկացման համար համապատասխան ծածկ և հնարավորություններ լինեն: Այլ հարցեր կա՞ն:

Հարց (Նորայր Կարապետյան) – Ես մեկ հարց ունեմ մուտքերի հետ կապված: Տարրական մանկապարտեզի և դպրոցի մուտքերը առանձնացված են, թե՞ ոչ:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Մուտքերը առանձնացված են:

Լրացում (Նորայր Կարապետյան) –Որ չխանգարեն միմյանց:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Յուրաքանչյուր մուտքի մոտ լինելու է թեքահարթակներ:

Հարց (Նորայր Կարապետյան) – Նաև մեկ հարց, վերելակ լինելո՞ւ է:

Պատասխան (Էրիկ Թումանյան) – Վերելակ լինելու:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ, այլ հարցեր կա՞ն:

Պատասխան (Արմինե Գաբրիելյան) – Ես ուղղակի լրացման համար ասեմ, որ ըստ օրենքի սահմանված կարգի, ինչպես նշվեց արդեն, քանի որ գերազանցում է 1500քմ-ը իրականացվում է ՇՄԱԳ առաջին հանրային լսումը: Դրական եզրակացությունից հետո կտրվի համայնքի ավագանուն՝ արձանագրության հետ միասին 30 աշխատանքային օրվա ընթացքում ավագանին կտա իր նախնական համաձայնությունը կամ իր որոշումը

նախնական: Դրանից հետո ՇՄԱԳ փորձաքննության կենտրոնը կիրականացնի 2-րդ հանրայն լսումը, որտեղ նորից հանրությունը կտեղեկացվի պատշաճ ձևով և բնակիչներն ու համայնքը իրենց հուզող հարցերը այդ ժամանակ նորից կբարձրացնեն:

Լրացում (Նորայր Կարապետյան) – Երկրորդ լսմանն արդեն նախագիծը պատրաստ գալու է, ամեն մանրուք քննարկվելու է, շտկվելու է և վերջնական համայնքը և դուք եք համայնքի ներկայացուցիչ համայնքապետարանում կարող եք ծանոթանալ այդ ամեն ինչին : Համայնքապետարանը պետք է հաստատի այդ նախագիծը և հաստատելու արդյունքում արդեն կգա վերջնական տեսքին:

Լրացում (Արմինե Գաբրիելյան) – Ինչ վերաբերում է շրջակա միջավայրին՝ շինարարության ընթացքում էլ պետք է պահպանվեն շինարարական, բնապահպանական կանոնները, բնապահպանական և սոցիալական: Նշվեց արդեն, նորից չկրկնեմ մշտադիտարկումներ կիրականացվեն տարածքային զարգացման հիմնադրամի կողմից և խիստ կհետևեն, որպեսզի այդ կանոններին հետևեն: Շին հրապարակը նախապես կցանկապատվի, որպեսզի երեխաների մուտքը, նամանավանդ, որ դպրոցի բակում է, ընդհանրապես միշտ շին հրապարակը ցանկապատվում է, որպեսզի ապահովի, որ ոչ մեկի մուտք չլինի շին հրապարակ: Նամանավանդ, որ դպրոցների հարակից տարածքներում են ամեն ինչ իրականացվում այս դեպքում:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ: Շինարարներ կարո՞ղ է հարց ունենաք:

Բարի շնորհակալություն: Ողջունելի է, որ նաև դպրոցից ներկայացուցիչներ կան հանրային լսմանը և նաև տվյալ բնակավայրի բնակիչների մասնակցությունն է խրախուսելի հանրային լսումներին, որ երբ հարցեր առաջանում են տեղում բարձրաձայնեք և փորձեք լուծում տաք: Շնորհակալություն եմ հայտնում հանրային լսման մասնակիցներին և հանրային լսումը համարենք կայացած:

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Նախաձեռնող՝

«ՄԿ Բիլդինգ» ՍՊԸ տնօրեն **Կ. Պետրոսյան**